ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РФ
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

« 04 » հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ ի.գ.թ. Հայրապետյան Ա. Կ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Բանկային իրավունք

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

«Բանկային իրավունք» դասընթացն ուսումնասիրվում է բանկային գործունեության հիմնական իրավակարգավորումները և բանկային իրավունքի սուբյեկտների միջև առկա իրավահարաբերությունների յուրահատկությունները: Գործնականում բանկային օրենսդրությունն անընդհատ ենթարկվում է փոփոխությունների, որը մեծապես ազդում է, ինչպես բանկային գործունեության սուբյեկտների, այնպես էլ ֆինանսական ոլորտի տարբեր ինստիտուտների վրա:

Բարձր տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը գործնականում ստեղծում է բանկային գործունեության կարգավորման նորանոր և ավելի արդիական գործիքներ: Այս ամենը, միևնույն ժամանակ, հանգեցնում է նոր իրավահարաբերությունների առաջացման, որոնք պահանջում են նոր իրավակարգավորումներ, ուստի բանկային օրենսդրության մշակման ուղղությամբ աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

«Բանկային իրավունք» դասընթացի նախատեսված է բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների, ինչպես նաև բանկային իրավունքի հիմնահարցերն ինքնուրույն ուսումնասիրողների համար: Վերջինս կարող է նաև գործնական կիրառելիություն ունենալ բանկային, դատական և պետական այլ մարմինների աշխատակիցների համար:

Դասընթացի նպատակը և խնդիրները

«Բանկային իրավունք» դասընթացի նպատակն է ապահովել ուսանողների կողմից, բանկային իրավունքի տեսության հիմնական դրույթների, բանկային գործունեության իրավական կարգավորման, բանկային օրենսդրության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունների, ինչպես նաև բանկային գործունեություն իրականացնող մարմինների գործառույթների և բանկային օրենսդրության խախտման համար նախատեսված պատասխանատվության վերաբերյալ համալիր գիտելիքների յուրացումն:

«Բանկային իրավունք» դասընթացի հիմնական խնդիրներ են՝

- ապահովել ուսանողների առավելագույն ներգրավածությունը կրթական գործընթացին,

- օգնել ուսանողներին հասկանալ բանկային իրավունքի համակարգը, առանձնահատկությունները և կարգավորման առարկան,
- ուսումնասիրել բանկային օրենսդրության սկզբունքները և աղբյուրները,
- բացահայտել բանկային օրենսդրության հիմնական օրինաչափությունները,
- հասկանալ բանկային համակարգի կառուցվածքը,
- պատկերացում կազմել բանկային գործունեություն իրականացնող մարմինների համակարգի, մարմինների իրավասության և գործառույթների վերաբերյալ,
- տարբերակել բանկային իրավահարաբերությունների տեսակները և բանկային իրավահարաբերությունների սուբյեկտներին,
- ձևավորել ուսանողների մոտ համալիր գիտելիքներ դրամի շրջանառության և անկանխիկ հաշվարկների բանկային իրավական կարգավորման, խնայողությունների և բանկային ավանդների իրավական ռեժիմի, արժույթային և արտարժույթային բանկային գործառույթների իրավական կարգավորման և բանկային օրենսդրության խախտման համար նախատեսված պատասխանատվության վերաբերյալ:

Դասընթացի օբյեկտը և առարկան

«Բանկային իրավունք» դասընթացի ուսումնասիրության օբյեկտ է հանդիսանում բանկային օրենսդրությունը և բանկային իրավահարաբերությունները կարգավորող այլ իրավունքի աղբյուրները:

«Բանկային իրավունք» դասընթացի առարկան՝ բանկային իրավունքի սուբյեկների միջև առաջացող իրավահարաբերությունների հիմնախնդիրներն են, մասնավորապես, գործնականում բանկային օրենսդրության դրույթների կիրառումն, ինչպես նաև բանկային մարմինների կողմից իրականացվող գործունեությունը:

Դասընթացի մուտքային պահանջները

«Բանկային իրավունք» դասընթացի շրջանակներում, առավել արդյունավետ կրթական վերջնարդյունքների ձևավորման համար, ուսանողներին անհրաժեշտ են բազային

գիտելիքներ իրավագիտությունից, պետության և իրավունքի տեսությունից, ինչպես նաև հարակից մի շարք այլ իրավունքի ճյուղեր ուսումնասիրող առարկաներից:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքն ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱԾ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

Բանկային իրավունքի սկզբունքների, ինստիտուտների, նորմերի էության, այդ ինստիտուտների և նորմերի օրենսդրական ամրագրման և կիրառման գործընթացի վերաբերյալ հիմնարար և համակարգված գիտելիք: Մասնավորապես.

- Բանկային իրավունքի տեղն իրավական համակարգում:
- Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության բանկային համակարգի կառուցվածքը և առանձնահատկությունները:
- Բանկային իրավահարաբերությունների հասկացությունը և տեսակները:
- Բանկային իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները:
- Բանկային գործունեություն իրականացնող մարմինների համակարգը և մարմինների իրավասությունը:
- Բանկային գործունեության նկատմամբ հսկողության իրականացման կարգը:
- Բանկային գործառույթների տեսակները և դրանց իրավական կարգավորումը:
- Բանկային օրենսդրության խախտման համար նախատեսված պատասխանատվության տեսակները:

Հմտությունները՝

- *գիտելիքի կիրառման հմտությունները՝*

1. Կարող է որոշել բանկային գործունեություն ոլորտում իրավական խնդիրների էությունը:

2. Կարող է կողմնորոշվել բանկային իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերում։
3. Կարող է ներկայացնել սեփական իրավական դիրքորոշում՝ հիմնվելով նորմատիվ իրավական ակտերի, բանկային գործունեություն իրականացնող և պետական մարմինների բացատրական նյութերի վրա։
4. Կարող է պաշտպանել բանկային իրավահարաբերությունների այս կամ այն մասնակցի շահերը։

- ***ընդհանրական իմացական հմտությունները*** ՝

1. Կարող է գործնականում կիրառել ձեռք բերված գիտելիքները։
2. Կարող է կատարել վիճահարույց իրավիճակների իրավական վերլուծություն։

Կարողունակությունը (կոմպետենցիան) ՝

- ***ինքնուրույնությունը և պատասխանատվությունը*** ՝

1. Ունակ է ինքնուրույն յուրացնել նորմատիվ իրավական ակտերը, դատական պրակտիկան և պետական մարմինների բացատրական նյութերը։
2. Ունակ է վերլուծել բանկային իրավունքի աղբյուրներ հանդիսացող նորմատիվ իրավական ակտերը։
3. Ունակ է բանկային գործունեություն ոլորտում տարբեր իրավական երևույթների համեմատական վերլուծություն։
4. Ունակ է աշխատել բանկային գործունեություն ոլորտում շրջանառվող իրավական փաստաթղթերի հետ։

Դասավանդման եղանակները և մեթոդները

«Բանկային իրավունք» դասընթացն անցկացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Գործնական պարապմունքների նպատակն է օգնել ուսանողներին ուսումնասիրել դասընթացի կարևորագույն խնդիրները, խորացնել և համակարգել ուսանողների գիտելիքները տվյալ ոլորտում:

«Բանկային իրավունք» դասընթացն ուսումնասիրելիս կարևոր դեր է խաղում ուսանողների ինքնուրույն աշխատանքը:

«Բանկային իրավունք» դասընթացի ընթացքում կիրառվում են բացատրական, տեղեկատվական, գործնական, վերարտադրողական, համեմատական, հետազոտման և մասնակի որոնման մեթոդները:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ 2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2-րդ ուսումնական տարվա 2-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**72**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**32**
1.1.1. Դասախոսություններ	**16**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**16**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**40**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)	**40**
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	**20**
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	**20**
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**ստուգարք**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1. Բանկային գործունեության իրավական կարգավորումը:	4	2	2
Թեմա 2. Բանկային գործունեություն իրականացնող մարմինների համակարգը:	2	1	1
Թեմա 3. Բանկային գործունեություն իրականացնող մարմինների իրավասությունը և գործառույթները:	2	1	1
Թեմա 4. Բանկային իրավունքի հասկացությունը և առարկան:	2	1	1
Թեմա 5. Բանկային իրավունքի սկզբունքները և աղբյուրները:	2	1	1
Թեմա 6. Բանկային իրավահարաբերությունների հասկացությունը և տեսակները:	2	1	1
Թեմա 7. Բանկային իրավահարաբերությունների սուբյեկտները:	2	1	1
Թեմա 8. Դրամի շրջանառության և անկանխիկ հաշվարկների բանկային իրավական կարգավորումը:	4	2	2
Թեմա 9. Խնայողությունների և բանկային ավանդների իրավական ռեժիմը:	2	1	1
Թեմա 10. Արժույթային և արտարժույթային բանկային գործառույթների իրավական	2	1	1

կարգավորումը:			
Թեմա 11. Բանկային օրենսդրության խախտման համար նախատեսված պատասխանատվության տեսակները:	**2**	**1**	**1**
Թեմա 12. Բանկային գաղտնիքի ինստիտուտը:	**2**	**1**	**1**
Թեմա 13. Բանկային իրավահարաբերությունների սուբյեկտների սնանկության առանձնահատկությունները:	**2**	**1**	**1**
Թեմա 14. Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների իրավական կարգավորումը:	**2**	**1**	**1**
Ընդամենը	**32**	**16**	**16**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Բանկային գործունեության իրավական կարգավորումը:

Թեմա 2. Բանկային գործունեություն իրականացնող մարմինների համակարգը:

Թեմա 3. Բանկային գործունեություն իրականացնող մարմինների իրավասությունը և գործառույթները:

Թեմա 4. Բանկային իրավունքի հասկացությունը և առարկան:

Թեմա 5. Բանկային իրավունքի սկզբունքները և աղբյուրները:

Թեմա 6. Բանկային իրավահարաբերությունների հասկացությունը և տեսակները:

Թեմա 7. Բանկային իրավահարաբերությունների սուբյեկտները:

Թեմա 8. Դրամի շրջանառության և անկանխիկ հաշվարկների բանկային իրավական կարգավորումը:

Թեմա 9. Խնայողությունների և բանկային ավանդների իրավական ռեժիմը:

Թեմա 10. Արժույթային և արտարժույթային բանկային գործառույթների իրավական կարգավորումը:

Թեմա 11. Բանկային օրենսդրության խախտման համար նախատեսված պատասխանատվության տեսակները:

Թեմա 12. Բանկային գաղտնիքի ինստիտուտը:

Թեմա 13. Բանկային իրավահարաբերությունների սուբյեկտների սնանկության առանձնահատկությունները:

Թեմա 14. Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների իրավական կարգավորումը:

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1. Բանկային իրավունք, Աբգարյան Կ.Հ., Ուս. ձեռնարկ., Երևան, 2008, 270 էջ:
2. Ֆինանսական իրավունք, ուսումնական ձեռնարկ, Ս. Մուրադյան, Է. Շաթիրյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2006, 280 էջ:
3. Финансовое право: учебник для бакалавров / Л.Л. Арзуманова, Н.М. Артемов, О.В. Болтинова и др. ; отв. ред. Е.Ю. Грачева. – Москва : Проспект, 2014. – 645 с.
4. Финансовое право : учебник / отв. ред. Н. И. Химичева, Е. В. Покачалова. — 6-е изд., перераб. и доп. — М. : Норма : ИНФРА-М, 2019. — 800 с.
5. Финансовое право : учебник для академического бакалавриата / С. В. Запольский [и др.]; под общей редакцией С. В. Запольского. — 3-е изд., перераб. и доп. — Москва : Издательство Юрайт, 2018. — 491 с.
6. Банковское право: учебник и практикум для вузов / Г. Ф. Ручкина, Е. М. Ашмарина, Ф. К. Гизатуллин. — 4-е изд., перераб. и доп. — Москва: Издательство Юрайт, 2024. — 471 с.
7. Правовое регулирование экономической деятельности: учебник для вузов / Н. Ф. Попова; под редакцией М. А. Лапиной. — 3-е изд., перераб. и доп. — Москва: Издательство Юрайт, 2024. — 307 с.
8. Банковское право: учебник и практикум для вузов / Д. Г. Алексеева [и др.]; под редакцией Д. Г. Алексеевой, С. В. Пыхтина. — 4-е изд., перераб. и доп. — Москва: Издательство Юрайт, 2024. — 410 с.

Դասընթացի ապահովվածությունը նորմատիվ իրավական ակտերով

1. ՀՀ Սահմանադրություն
2. «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք
3. «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք
4. «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք
5. «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենք
6. «Վարկային կազմակերպութունների մասին» ՀՀ օրենք
7. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք
8. «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենք
9. «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենք
10. «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք
11. «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենք
12. «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենք

Դասընթացի ապահովվածությունն առցանց աղբյուրներով

1. https://www.arlis.am/
2. http://www.eaeunion.org/
3. https://www.zakonrf.info
4. https://www.petekamutner.am
5. https://www.nalog.gov.ru